

Գորգը ի պատիւ ամուսնած կ'ըլլար Հայոց մէջ նոյնիսկ դահի վրայ: Ըստ Ստեփ. Օրբելեանի մեր մատենագրութեան մէկ վկայութեան՝ Սիւնեաց Սահակիա իշխանուհին Ալլաբերդցի Մուշէ կաթողիկոսը (526-534) «փառաւորութեամբ տարեալ իմուցանէին ի խորանն արքունական եւ նստուցանէին ի վերայ սեղեթել եւ մարդարտաշար

ոչ այնքան կարեւոր: Սակայն կարեւոր է հոս լուսանցքի տակ ներկայացնել վերջին շրջանին Պարսիկ բաղաբաղանութեան մէջ գորգին խաղաղած մեծ դերը:

1817-1818 Ռուս-Պարսիկ զանազանութեան առեւ, Ռուս-Անգլիական մրցակցութեան մէջ, բաղաբաղան նշանակութիւն արուեցաւ իրենց ղեկավարներուն Շահին ներկայացած առեւնին, զահին առջեւ փռուած ընդունելութեան գորգին վրայ իրենց սովորական կօշիկով քայլելին կամ շքայելին: Զօրավար էրմոսֆի Ռուս ղեկավարութեան անդամներէն Moritz Von Kotzebue այս իր ղեկավարական պատմութեան մէջ իր զիւանդակողական յաղթանակ մը կը նկատէ Ռուս ղեկավարին Շահէն խէլազ շատանալով համազգեստով Շահին ներկայանալու պայմանին ընդունելով: Kotzebueի անդիւրեղնի թարգմանիչը լուսանցքի տակ կը գրէ. «գորգին վրայ, (որ սովորաբար նորին Պարսկական Վեհափառութեան բաղմոցը, եւ յաճախ ալ ճաշի սփռոցն է) կաշիէ կօշիկով կոխելու առանձնաշարհումը կէտ մըն էր՝ որուն վրայ շարքերէն Բրիտանական Դեսպանները, երբ դառն որ Շահը ինքն իսկ կը հանէր իր կօշիկները, որեւէ առեւն որ նորին Վեհափառութիւնը գորգին վրայ կոխէր, որով նորին Անունութիւնը (Բրիտանական Դեսպանը) իրաւացի դատեց որ աղտոտ կօշիկները եւ մոյկները, որոնցմով ղեկավարութեան անդամները կամ քալած եւ կամ ձիարսած կ'ըլլային ընդունելութեան, հանէին (իրենց այդ աղտոտ առանձնանքները) եւ անոնց տեղ հապնէին կարմիր լաթէ շինուածներ, որով ան (Բրիտանական ղեկավարը) պատրաստակամութեամբ ընդունեց այս մարքրութեան եւ յարմարութեան սկզբունքներու վրայ հիմնուած կարգադրութիւնը, որ պատուոյ ստորնայման հօրք մը չէր»:

«Մաշիէ կօշիկ հապնելու այս կարեւոր կէտը, որ այնքան յաղթական կերպով հեղինակէն (Kotzebue) ներկայացուած է, եւ որ գուցէ մեր ընթերցողներէն շատեր վերադրեն յարգումը սովորութեան մը զանցառութեան, քան թէ նկատման մէջ», առիկա պատճառ եղաւ Ռուսական Դեսպանութեան պարուններուն աւելի անհաճոյ ըլլալու, քան ինչ որ անոնք յարմարօրէն կը նկատուէին: Օրինակի համար, երբ Միլլազ ճէֆֆի ճաշի հրաւիրեց Ռուսական Դեսպանութեան Քարտուզարը իր կցորդներով եւ անդամներով միասին, ու Անգլիացի պարունները զանաք իրարու ներկայացնելու նպատակով, Ռուսերը մոյկաւորուած ըլլալով, Պարսիկ վարչապետին նստած գորգին վրայ յատանալ շփոյլաւորուեցան, եւ որով անոնք վրանին ներքին որմերէն աւելի ներս չիրցան յառաջանալ, այլ գուրսը աթոռներու վրայ նստան, մինչ մեր հայրենակիցները (Անգլիացիք) լաթէ կօշիկներով ըլլալով՝ վարչապետին մօտ նստած էին, անոր գորգին վրայ»: (Narrative of a Journey into Persia... in the year 1817. — London, 1819, pp. 304-55).

Իրապէս զուարճալի է Անգլիացի թարգմանիչին Ռուս ղեկավարութեան այս ընթացքը այսպէս քննադատելը, ան կը մոռնայ որ Անգլիացի ներկայացուցիչ մը 1560ական թիւերուն, Mr. Anthony Jenkinson երբ առեւնուան Շահին մաշիէ կօշիկ ստացաւ անոր ներկայանալու համար, ան այս սովորութիւնը ոչ հասկցաւ եւ ոչ ալ զնահատեց: Նոյնքան ալ աւելորդ է Ռուսական այդ սովորութեան հանգէպ յարուցած առարկութիւնը: Արեւելի մէջ գորգը եղած է յարգանքի նիւթ, որ ծաղած է անոր բազմատեսակ օգտագործումէն: Գորգերու համար արեւելեան Այս ըմբռնումը վաղուց գոյութիւն ունեցած է Հայուն, Պարսիկին, Բելուսին, Արաբին եւ Թուրքին մօտ: 1684ին M. Dalerac կը գրէ որ երբ Եւրոպական Թուրքիոյ մէջ փաշայի մը տունը կ'առաջնորդուի, ուր արտաքին արահին մէջ «կօշիկնիս հանեցինք, ինչպէս որ Թուրքերը հանեցին իրենցը, որովհետեւ դահլիճին դեպքը ամբողջապէս ծածկուած էր գորգով մը»: (Secret History of the Reign of John Sobieski the III. — London, 1700, p. 162).

John Macdonald Kinneir 1815ին Սղերդի մէջ կը գտնուի եղիտի ցեղապետի մը բովը, «ցեղապետին կրտսեր մէկ եղբայրը անեակ մտաւ, որուն անկրթութիւնը կը հաւասարէր միւսին բաղաբաղաւորութեան, մեր գորգերուն վրայէն քալեց առանց իր կօշիկները հանելու»: (Journey through Asia minor, Armenia, etc. London, 1818, p. 415).

Ուրիշ ուղեգիրներ ալ կը վկայեն որ Մահմեդականները թոյլ չեն տար որ Քրիստոնեաները զինի խմեն եւ գորգի վրայ կաթնեցնելով դաշն պղծեն: (Missionary Researches in Armenia, — Eli Smith, H. G. O. Dwight, London, 1834, p. 348).